

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղիւրիոյ համար	
Տարեկան	10 ծր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Անտիկալի համար	
Տարեկան	2.50 ժր.
Վեցամսեայ	1.25 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՅԵԼԻ	

Նրանուցեալ սուր առարկիւն երեսն համար 40 սանթիմէ կ. իսկ վերջիւ երեսն համար 20 սանթիմէ կ. երեքեկն աւելի անգամներու համար 20 Օլօ զեղը կըլլայ:

ՇԱԲԱԹ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նախակ եւ դրամ դրկի
Խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: Д-р Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՆՈՐ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

Ա. ՏԱՐԻ

Կազմեց Յ. Կ. ՊՕՆՃՈՒԿԵԱՆ

Այս պատկերազարդ ֆերական-Ընթերցարանը որ մինչեւ Օգոստոս 20 ընդ պիտի տեսնէ, կը յանձնարարուի մասնաւորապէս Պատ. ուսուցիչներու ու շաղրութեան: Պատրաստուած է շատ զիւրուսոյց մէթոտով եւ կը պարունակէ բարոյական խրատներ, իրագրիտական եւ առողջապահական ծանօթութիւններ կարճ եւ սիրուն պատմութիւններու եւ առածներու ձեւին սակ, որոնք գրուած են մանուկներին հասկնալի լեզուով: Ազգային-պատմական ամենէն նշանաւոր մէկ քանի գէմքերու եւ զէպքերու վրայ կարճ տեղեկութիւններ, քերականական քանի մը գիտելիք, մանկական երգեր եւ հանելուկներ, ամէնքն ալ խնամով ընտրուած, պարզ եւ պարզ համար շատ հետաքրքրական եւ հրահանգիչ կը դարձնեն գրքոյկին ընթերցումը:

Գին 60 սանթիմ հատը, զպրոցներու եւ գոնէ 20 օրինակ գնողներուն համար հարկերին 15 զիջլ: Դիմել կազմողին սա հասցեով
J. G. Bondjoukian
Varna

ՄԻՆՉԵՒ ԵՐԲ

Կղերը մեր ժողովրդի միտքը կաշկանդելու, նրան ամեն մի յառաջադիմական հոսանքից, զործից միշտ ետ մղելու եւ հեռու պահելու խնդրում ահագին դեր է կատարել ու դեռ կատարում է: Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող վարվել այդ սեւ տարրը. որովհետեւ ամեն մի յառաջադիմական մտաւոր շարժում եւ զործարմատականապէս զննում են կղերի անձնական շահերին՝ նրա բոլորովին սուտ հիմքերի վրա դրված հեղինակութիւնը կորստելով:

Հեղինակութիւն, որը աւելի զօրեղացել է մեր քաղաքականապէս անկախ չը լինելու համար. հանգամանքները այնպէս են բերել որ մեր ժողովուրդը ստիպւած՝ ազգութիւն եւ կրօն միմեանց է խառնել. եւ կրօնաւորները

գործել են մեր անմիջական իշխողները:

Ահա այս կրօնքով իշխողները բացի նրանից, որ մեզ միշտ հեռու են պահել իսկական լոյսից, այլ եւ մեզ քարոզել են ստել, կեղծել, քծնել եւ հնազանդել ժողովրդի մեծ ու պզտիկ, ուղղակի եւ անուղղակի բռնակալներին, որովհետեւ իրանք նոյնը կատարելով՝ միշտ վայելել են աշխարհի զօրեղների հովանաւորութիւնը. միշտ կուշտ են մնացել եւ իրանց նեղ ու գծուծ վառասիրական տենչերին բաւականութիւն ստացել. միշտ եղել են մեզ խորազանդների հլու ստրուկը, ձեռքը լիզողը, իսկ մեր գլխին ընկող կոտորուները, հարբուհարողները:

Բացառութիւնները շատ սակաւ են, գրեթէ աննշմարելի:

Եւ այդ պատճառով այս օրվայ հայ կղերը, թէ քահանայ եւ թէ վեպարաւոր, ներքնապէս ժողովրդի հետ կապող բան չունի, բացի եկեղեցական ծիսակատարութիւններից. եւ եթէ այդ ծիսակատարութիւնների համար ժողովրդից դրամ չստանայ, նա ազգին էլ կը դառնանէ, եկեղեցուն էլ, Հայ կղերը սպրում է եւ փառք տալիս իր Աստուծուն, որովհետեւ առանց խելքի, առանց զիտութեան իշխում է ժողովրդի վրա, նրա սրտի եւ մտքի աէրն է: Բայց մինչեւ ե՞րբ այսպէս պէտք է լինի. մինչեւ ե՞րբ այդ ազգէտ, անբարոյական եւ ժողովրդական հոգերից միշտ հեռու փախչող չորանները պէտք է ընկող կոտորեն մեր գլխին, պէտք է խաղան մեր ամենաներբական զգացմունքներին հետ:

Ներկայ հանգամանքներում մենք անկարող ենք մեր կղերը արմատական փոփոխութեան ենթարկել. ուրեմն այդ դասակարգը բարեխաւելու միտում ունեցող միջոցները եւ ջանքերը բոլորովին զուր են: Բայց շարունակել գիմանալ այդ դասակարգի վատութիւններին եւ վա-

սակար ուղղութեան, նոյնպէս անկարող ենք:

Հապա ի՞նչ անենք:

Մեր կարծիքով մի բան կարելի է անել. հնար եղածի չափ արտաքուսի դրանց հասարակական գործերից. երբէք թոյլ չտալ որ մտնեն որ եւ է ժողովրդական գործի մէջ, ի հարկէ բացառութիւն կազմող լաւերին միշտ ընդունելով:

Ընդունել իբր անպայման կերպով վրասակար եւ անպէտք տարրը, որի գոյութեանը գիմանալու ենք լոկ հանգամանքներից ստիպւած: Մի խօսքով բոլորովին անտարբեր լինենք գէպի այդ տարրը, եթէ նրանք բացի ծիսակատարութիւնից ուրիշ գործիչն խառնվում. իսկ երբ խառնվեն, ուշի ուշով հետեւենք, եւ մի հակաժողովրդական գործ կատարած միջոցին իսկոյն դուրս վանենք:

ՎԱՐԴ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒ ԳՆՆԵՂ ԿԱՄ ՉԸ ԳՆՆԵՂ

Շատ ուրախ ենք, որ Վառնայի թերթերուն մէջ՝ հակառակ իրենց անձուկ ծաւալին, մերթընդ մերթ կերելին կրթական հարցին աւագ կարեւորութիւնը շեշտող գրութիւններ, որոնք գէթ կողմնակի կերպով իրենց շինիչ ազդեցութիւնը կրնան ունենալ վաղ կամ անագան: Միայն փափագելի էր, որ այդ տեսակ յօդուածներուն նիւթերը օտար կաղապարէ հանուստ եւ օտար աղբիւրէ քաղուած չըլլային, այլ իսկապէս մեր մտքին անխառն ծնունդն ըլլալով մասնաւորապէս մեր միջավայրին յարմար եւ մեր կենսական պէտքին համար ձեւ ու չափ ունենային: Կէտ մը, որ տարաբախտաբար միշտ վրիպած է սակաւ գրողներուն ու շաղրութեանէն:

Գեռ նոր կարգացինք, նախ «քննութեանց օգուտը» հաստատող, ապա՝ զայն բացատրող «քննութեանց վրասները» վերնադրով կրկնակի հակախօսականները, որոնց երկուքին հեղի-

նակներն ալ թէեւ քիչ մը կարծեցեալ մանկավարժի վայել հոգեբով՝ բայց անշուշտ՝ ամէն պարագայի մէջ ակնարկուած խնդիրը պարզելու գովելի նախանձախնդրութեամբ մը՝ ճկուն գործին կը փայլեցնէին հրապարակային քննութեանց վրասակար կամ օգտակար ըլլալու մասին՝ իրենց ահարկու վճիռն արձակելու տենչանք:

Այդ յարգելի պարոնները, հարկաւ պիտի հաճին ներել մեզ, երբ՝ երկար ատեն կրթական գործին մէջ գտնուելնուս իրաւունքովը՝ համարձակինք, ո՛չ իբրեւ յաւակնոտ դատաւոր, այլ իբր անկաշառ գատախաղ, մեր խոնարհ դիտողութիւններն յայտնելով հանգերձ՝ խնդրոյ առարկայ դարձած նիւթին վրայ ալ՝ ոչ գիտական՝ այլ զուտ փորձառական մի քանի կարծիքներ մէջ բերել:

Առ այս, անմիջապէս պէտք է յարել թէ, մեր գատախաղութիւնը Պ. Չարգարի ի նպաստ, իսկ Պ. Պիտի ի հեճուկս ըլլալով, տեղն է անցողակի ակնարկութեամբ առաջին պարոնին դիտել աւլ՝ ըսելով՝ որքան որ մեր կարծիքով՝ իրաւունքը իրեն կողմն էր, սակայն այնքան եւ իրաւամբ ալ իր թէ նախորդ գրութիւնը եւ թէ վերջին պաշտպանողականը՝ յետին ծայր թերի, միակողմանի եւ անզօր էին պաշտպանած դատը վաստակելու համար: Ուստի, անկեղծօրէն կապարենք իրեն, որ ուրիշ անգամ այդ տեսակ բարդ հարցերու մէջ՝ ոչ աւաղի վրայ հիմնուած փաստերու օժանդակութեամբ՝ հասցալ, աւելի հասուն հասկացողութեամբ եւ կուս կերպով կերպաւորուած հրապարակ իջնէ:

Գալաք աղնիւ ընդդիմախօսին, արդարեւ ըստ ինքեան՝ իր երկար յօդուածներուն պարունակութիւնը թոյլ, բայց ըստ երեւութիւն կարի յոյժ փաստաձոյլ էր, եւ այդ փաստեր—եթէ կարելի է ըսել—ընա՛ւ մեր կրթական ազգուն մարմնոյն հազուստ չէին մատակարար, այլ ուղղակի եւրոպականին վայելչապէս կը պատ-

կան էին, հետևաբար անոնք Չինոս «մանտարիններուն» և Եւրոպայի «ինտելիգենտներուն» մէջ տարուած հեռաւորութեան չափ ալ, բոտ մեզ, զորի էին հեղինակին երեւակայած իրականութիւնը շոշեփելէ և միանգամայն հրապարակային քննութեանց պէտքը չը ժխտելէ զատ, հեղ մըն ալ կը հաստատէին անոնց անհրաժեշտութիւնը՝ «մեզ հայերու համար»:

Եւ որպէս զի ամէն ինչ լաւ հասկցուի, մենք կսկսինք ոտն առ ոտն հետեւիլ Պ. Պիօնի առարկութիւններուն՝ նոյնիսկ իր առաջ բերած օրինակներով հերքելով անոր կանխակալ վճռողականութիւնը:


Սխալ ենթադրութիւն է այն թէ՛ մեր մէջ հրապարակային քննութիւնը հին «աւանդականութեան» հետեւանք է. ո՛չ երբէք, ընդհակառակը՝ վերջա՛մուտ նորութիւն մըն է, որ ասկէ 30—40 տարիներ առաջ գրեթէ գոյութիւն չունէր, ինչպէս չունի և այժմ՝ իսկ դատաւային վարժարաններէն մէկ մասին մէջ. բան մը որ իրօք ցաւալի է, վասնզի այդ հրապարակային կոչուած քննութիւնները իր բոլոր թեւորութիւններով մէկտեղ՝ ո՛չ նուազ նպատած է մեր կրթական հաստատութեանց կազու միջակ դիճակը զգալապէս բարձրացնելու ժամանակէ մը ի վեր. և նոյնիսկ քաղաքացիական ճիշտութիւնը և մեր կրթական հաստատութեանց կազու միջակ դիճակը զգալապէս բարձրացնելու ժամանակէ մը ի վեր. և նոյնիսկ քաղաքացիական ճիշտութիւնը և մեր կրթական հաստատութեանց կազու միջակ դիճակը զգալապէս բարձրացնելու ժամանակէ մը ի վեր:

Ստուգապէս մեծամիտ փութկոտութիւն կը համարինք Պ. Պիօնի այն խիզախ քայլը, որով առանց փոքր վարանումի «արտառոց» կանուանէ Տոյստոյի նման

եղական դէմքի մը մանկավարժական մարտը կարծիքները, զորոնք լաւ ըմբռնելու համար գուցէ ամէնքիս հետ ինքն ալ պատիւ կը համարի ընդ երկար աշակերտելու այդ Ռուս Հիւկոյին, որպէսզի քննութեանց փաստակարարութիւնը վաւերացնելու համար, մանտարիններու ծիծաղաշարժ նմոյշը չը նետէ մեր երեսին, մտածելով որ՝ այդ խեղճերուն արուած հրապարակային կրտսանքները՝ ո՛չ եթէ մեզ պէս զանազան գիտութիւններ ու լեզուներ սովորեցնելու եռանդով է, այլ լոկ իրենց կրօնի անվերջ հաւատալիքները գոց ընել տալու միակ տեղով: Առաջի, այս պարագային մէջ ալ անհունապէս անհեթեթ չէ՞ գլխովին տարբեր պայմաններու տակ գտնուող տարեց մանտարիններու կրած երկարատեւ տանջանքները համեմատել մեր մտողաշ մանուկներուն մի քանի օրուան քաշած թեթեւ խոնջէնքին հետ: Եւ ի՞նչ, կը կարծուի թէ ապարդիւն պիտի մնային այդ շինարարներուն տրուած խիստ խնամքները, եթէ ճիշդ մեր նպատակաւ և բազում տարբար հեշտին մեթոտով գործադրուէին, որպէս հոն հաստատելու անգղիական և ուրիշ եւրոպական դպրոցները իրենց սարեկան հրապարակային շքեղ քննութիւններով բնիկ գաճաճիկները «ճարտարախօս» քաղաքագէտներ կը դարձնեն:

Ս. ԳՈՒՍՅՐ

(Շարունակելի)



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պրախա, 7 Օգոստոս

Ինչպէս ուրիշ շատ տեղեր՝ նոյնպէս և հոս Հայաստանի սովորաց ի նպատակ հանգանակութեան մը համար ժամանակին յանձնարումը մը կազմուած էր ընդ նախագահութեամբ տեղու, հոգեւոր հովիւ Արժ. Տ. Ստեփաննոս քահանայ Կիւլիւմեանի և հաւաքուած երկու հարիւր քառասուն ֆրանք: Այդ գումարն նոյնութեամբ քառասուն օրէ աւելի է որ զրկուած էր Պատրիարք Օրհմանեանի, ընդ փոյթ հասցունելու համար որոշեալ նպատակին: Սակայն ի լրոյ կիմանամք թէ, հակառակ տեղուս հոգաբարձութեան պաշտօնական կրկնակի գիմումներուն՝ ցարդ Պատրիարքն ու է պատասխան չէ հաճած տալ այդ գումարն ժամանակին ստացած և նպատակին ծառայեցուցած ըլլալուն առթիւ Արդէն ուրիշ կարգ մը արգարացուցիչ պատճառներ չունենալով տեղուս հայ հասարակութիւնն վերին աստիճանի գրգռուած է Օրմանեանի դէմ. որովհետեւ տեղուս հոգաբարձութիւնն ու քահանայ ինքնինքին արդարացուցած են ցոյց տալով նամակատան ստացադիրն: Եւ ի՞նչպէս կարելի է չի կատարի Օրմանեանի դէմ, երբ ժամանակէ մը ի վեր ամէն սոր դեր կատարեց ի ֆրան հայ ազգին: Յարգ իրաւամբ իւրացուցած ամէնազարչելի անականներուն վրայ արդեօք խաչազողի տիտղոսն ալ աւելցունել պարձանք կը համարի իրեն:

Եթէ այդ է, անգամ մըն ալ կը յիշեցունենք իրեն թէ ամէն բան սահման ունի:

Բ. Գուռնէն տեղուս հիւպատոսին եկած պաշտօնագիր մը կը հրահանգէ ասա գտնուող թուրքերը և քիւրտերը ձրի անցագրի տրուելու և առանց նաւի ծախքի փութով Պօլիս վերադարձնել: Այս տնօրինութիւնը, պաշտօնական շրջանակներու մէջ, կը վերագրուի այս տարուան հունձքերու նուազութեան յառաջ եկած չքաւորութեան: Սակայն աւելի հաւանական կը թուի մօտալուտ պատերազմի մը առթիւ նոր կազմուելիք թուրք զինուորական վաշտերուն կարգադրութեան:

Գահանայի մը մասին ձեր նախորդ թիւերէն միոյն մէջ կը գրէիք վերապահութեամբ թէ Լահէյի Դեսպանաժողովին առթիւ Վառնաի միթիկի յանձնարարին ցրուած ազգարարութիւններն յիշեալ քահանայ յանձնած է կալցել թուրք հիւպատոսին: Այս դէպքը այնքան ճշմարիտ է որ բնաւ երբէք կասկած չի վերցուներ և ես ի մօտոյ զիտնալով զայն կը վստահեցունեմ ձեզ որ կատարելապէս ճշմարիտ է: Այս առթիւ կը փութամ հազորդել ձեզ որ Լահէյի Թալաղութեան Դեսպանաժողովին ներկայանալու համար իր լիազօր պատուիրակ՝ Տիար Մինաս Չերազի ճանապարհի ծախք՝ Պրախաի բաժնէն ինկած վաթսուս ֆրանքի գումարն ժա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԳԻՊՏԱՅԱՅ ՔՐՈՆԻԿ

Ավերժի դազադիւն առջև. — Ժողովրդային ևսխանակութիւն. — Լոյսը. — Եգիպտանայ ևոր քերթը

Անցեալները՝ մինչդեռ իր արձանին բացման հանգիստին առթիւ Շարժումի մէջ կը բացատրէինք Ավերժի մեծ նշանակութիւնը, ոչ մէկու մաքն կանցնէր որ այդ իր վերջին հանդէսը պիտի ըլլար ու հազիւ քանի մը ամիս անցած Մեծ-Յոյնը պիտի ախարաւէր իր բազմաբնակ կեանքը: Սակայն մահը, որ ի սպառ անկացման ստիպումով կահարեկէ մեզի պէս հասարակ մահկանացուները՝ անշուշտ չունեցաւ նոյն արհաւիրքը իրեն համար, որ իր անմահութեան կանխագիտութիւնը ունէր և օլըցեալ աւուրքք» (81 տարեկան) ու խաղաղ սրտով աչքերը փակեց: Իսկ իր կենդանութեանը կանգնուած արձաններէն և իրեն ի պատիւ տրուած բոլոր հանդէսներէն աւելի փառաւոր եղաւ սպարտութիւնը իր կապիկն, որ ընդհանուր հիւպոստ պատճառեց: Ու պէտք է ըսել թէ էն ամէնէն աւելի մեր վրայ ազդեց.

մենք որ ոչ նուազ հարուստներ ունենալով հանդերձ, ողորմելի տեսարան մը կը պարզենք աշխարհի, մեր համատարած խեղճութեամբ: Ո՞րչափ կը կարծէք որ ունեցած ըլլայ այս մեծանշան հարուստը, որ աջ ու ձախ նուէրներ կը սփռէր. ընդ ամէնը 650,000 անգլիական ոսկիի գումար մը, որ շատ անհամեմատական է իր հարստութեանը մասին հանրութեան կանխակալ գնահատումին: Այս գումարէն առատ բաժիններ հանելէ ետքը, իր ազգականներուն, բարեկամներուն և սպասաւորներուն, որոնց մէջ չէ մտցած մինչև ևս իր ֆէլլաճ գոնապանը՝ միտցեալը ամբողջովին կտակած է ազգային և բարեգործական հաստատութիւններու: Ընդարձակ տարածութեամբ ազարակ մը յատկացուցած է Ազգաստորիայի յոյն վարժարաններուն ու հիւանդանոցին. 500,000 ֆրանք Լարիսայի մէջ հողագործական վարժարան մը հիմնելու: 2 1/2 միլիոն ֆրանք զպարտարտանաւի մը շինութեան ու պահպանութեան համար. մէկ միլիոն ֆր. Ուիմպիական խաղերու, 500,000 ֆր. Օալոնիին. 750,000 ֆր. Աթէնքի բազմարուեստանոցին և ասկէ զատ 80 նշանաւոր նկարներ, նոյն բազմարուեստանոցին մէջ նկարչական մասնաւոր թանգարան մը հաստատելու Գէորգ Ավերժի անունով, 750,000 ֆրանք իր ծննդավայր Միցոյօ (Եգի-

րոս) քաղաքին բարեգործական զանազան հաստատութիւններուն: Բարեբարին մարմինը չքեղ յուղարկաւորութեամբ թաղուեցաւ առժամանակեայ կերպով տեղուս յոյն գերեզմանատան մէջ՝ ապագային Աթէնք փոխադրուելու: Ո՞րչափ ալ բուռն ըլլայ մեր ցեղական առեւտրութիւնը յոյներուն դէմ, որ հայը կրնայ ինքզինքը զսպել այս դազադիւն առջև ու չզոչել. երանի յոյներուն:

Եթէ մեր հարուստները մեղադրելի են իրենց խուլ անարբերութեամբ, զատապարտելի է մեր ալ ծոյլ յամառութիւնը, որ անոնց փէչին կատարող երեսի վրայ ձգած ենք մեր ազգային անմիջական գործերը, որոնք մեր լուսմանընդ ալ կրնային քիչ թէ շատ բարեկարգ վիճակ մը ստանալ: Ինչպէս այս առթիւ մեր նախորդ թղթակցութեան մէջ ըսած ենք՝ մեզի պէս ազգաս հասարակութիւններու համար կտակները զեռկարեւոր պակաս մը կը լրացնեն և հետեւաբար անհրաժեշտ ստատար մը են յառաջդիմութեան, սակայն պատմութեան մէջ չէ անսնուած ազգ մը, որ միայն իր հարուստներուն գրամով ու կտակներովը յառաջդիմած ըլլայ: Եթէ հարուստները իրենց խոշոր պարտքերը ունին՝ մենք ալ ունինք մեր փոքրիկ պարտքերը և

անոնց անպարտաճանաչութիւնը չը կրնար մեր պարտազանցութիւնը արգարացնել: Միմիայն հարուստներու հազարներուն աչք տնկելով անգործ կենալը տեսակ մը մուրացկանութիւն է. իսկ մուրացկանութիւնը բարոյական բարձրութիւն ու կորով չենթադրիր, եւ ոչ ալ վարդազոյն ապագայ մը ունի: Ասոր փոքրիկ բայց յատկանշական մէկ օրինակը պատանեցաւ անցեալները Ազգաստորիայի մէջ, որ իրեն հետեւանք զովելի նախաձեռնութեան մը շնորհիւ՝ յիշուելու կրկին շահեկանութիւն կընծայէ:

Գաղթականութեան հոսանքին ատեն Ազգաստորիայի մէջ կազմուած է «բարեգործական ազգաստանաճընկերութիւն» մը, որ այն միջոցներուն բաւական ծառայութիւններ մատուցանելի վերջ, հիմա հազիւ իր գոյութիւնը պահպանելու վիճակին մէջ է: Չհաշուելով թաղ խորհուրդի կողմէ յատկացուած ամսական 10 ոսկին, իր անդամավճարներուն գումարը ամիսը հազիւ 8 ոսկի կը հասնի. ասոր ալ կէսէն աւելին քարտուղարին և միւս պաշտօնեաներուն թոշակին կուստի: Ընկերութեան սնորհն և գործադիր ժողովներու ընտրութիւնը թէեւ բոլոր անգամներուն քուէարկութեամբ կը կատարուի, բայց և այնպէս սկիզբէն ի վեր բնարեւելները Լէֆէնիսական դասակարգէն եղած են. իսկ

մանակաւ զրկուած է Վասնարի միջինի կաննախմբին, որուն հաշուեցոյցն՝ հակառակ բացարձակապէս տրուած խօստումին՝ տակաւին չէ երեւցած լրագրաց մէջ:

Վերջին վայրկեանին կիմանանք որ Օրմանեան նոր շրջաբերակաւնով մը հրաւէր կը կարգայ արտասահմանի հայութեան թէ՛ եկեղեցիներու մէջ պնակի շրջաբերութեամբ և թէ՛ մասնակի հանգանակութիւններով դրամ հաւաքել և պատրիարքարան զրկել ի նպատակ բազմաթիւ վերաշինութեան: Միթէ՞ անսամթութեան գազաթնակէտն չէ այս Օրմանեան՝ անտառի կոշտ վայրենութեամբ՝ արտասահմանի հայութեան քթին խնդալ կողէ արգիւտք: Բայց ազէկ պիտի խնդայ վերջը խնդացողը: Կուզէ՞ք մեր վերջին բառը Օրմանեան՝ — ոչ կարեմք — և անոր համար որ՝ Ա.ը չենք վախազիր երկրորդ անխոհեմութեամբ մը ձեր գրպանը պարարտացունել ի վրաս մեր աղգին կենսական և անհրաժեշտ պէտքերուն:

Բ. Եթէ անկեղծօրէն կը փափագէի, մեր վանքերն իրենց նախկին լուսափայլ վիճակին մէջ տեսնել, ի՞նչու համար պէտք եղած միջոցներն ձեռք չստիք ժամանակին հանդէպ թուրք կառավարութեան, փոխանակ Սուլթան Համիտի աւերիչ ու ազգակործան քաղաքականութեան շորս ոտքով փարելու: Ի՞նչու համար Սուլթան Համիտի չէք դիմեր, զայն պատասխանատու չէք բռն-

ներ անոր հրամանաւ գործադրուած աւերանց, փոխանակ հայ ժողովրդին դիմելու և խայտառակ ըլլալու:

Գ. Մենք այլևս պէտք չունինք ո՛չ սրբավայրերու և ո՛չ սրբութեանց: Օրհասի կռիւն է այն որ կը մղենք մենք: Մենք աւելի կարեւոր՝ աւելի անհրաժեշտ պէտքեր ունինք, որոնց մէջ ամէնակարեւորն է զէնքը: Բաւական է որքան ծախսեցինք մեր դրամը ունայնաբար: Այժմ կուզենք ընդ միշտ տէրն ըլլալ մեր սրբավայրերուն՝ մեր ինչքին և պատիւին, և առ այն հասնելու համար մեր քսակներն միայն զէնքի համար պիտի պարպենք, անոր մէջ միայն կրնանք գտնել ազատութիւնն և բարբարոս ու կատաղի թրքական բէժմին կործանումն:

ԿՇԻՌ

Բուսնոյ, 8 Օգոստոս

Նախորդ գրութեամբ (*) հազորդած էինք ժողովրդեան և երիտասարդութեան արդար պահանջմամբ Օրմանեան անարժան Պատրիարքին չլիջատակուիլը:

Աւագբէց տէր Կարապետ և թաղ խորհրդոյ բոլոր անդամները, առանց բացառութեան, զայրանալով անցեալ կիրակի տեղի ունեցած անցքերէն, որք իրենց բուն քաղաքականութեան հիմքը կը կործանէին, կորոշեն, այս կիրակի ամեն մի-

(*) Նոյն իմաստ թղթակցութիւն մը եւս ստացած էինք, ասոր համար ձեր նախկին թղթակցութիւնը չը հրատարակեցինք:

ջոց ի գործ դնել, մինչև իսկ ոտտիկանական միջամտութեամբ, ժողովրդեան արդար ձայնը խեղդելով յիշել տալ Օրման փաշայի անունը: Այս որոշումը կայծակի արագութեամբ քաղաքիս ամէն կողմ կը տարածուի. մարքերը վերջին ծայր գրգռած՝ ամէն ոք անհամբեր կիրակի օրուան կայտաւէր. մեծ խառնակութիւն մը անխոստափելի կը դառնար: Վասնորի նորաստեղծ տէր Սարգիս Ղարապետն որ հոս էր, Աւագբէցի հրաւիրանք յանձն կառնէ կիրակի օր պատարագելու: Բայց իմաստով որ տեղոյն ժողովրդեան մէջ մեծ յուզում կը տիրէ յիշուի չլիջուի պատճառաւ, շարաթ օր անձամբ Աւագբէցի տունը կերթայ և կը հարցնէ թէ՛ վաղը պատարագի միջոցին Օրմանեանի անունը հարկ է յիշել թէ ոչ: Այո, պաղարկունութեամբ կըսէ Աւագբէցը, անհրաժեշտ է յիշել և թէ մեր որդիական պարտականութիւնն է միշտ հնազանդ մնալ Ս. Պատրիարք հօր հրամանաց:

Տէր Սարգիսին՝ աւագբէցի քովէն հեռանալէն վերջ, ժողովրդեան կողմանէ դիմումներ կը ըլլան որպէս զի պատարագին մէջ չը յիշէ այդ դաւաճանին անունը. և միեւնոյն ժամանակ ժողովրդեան մէջ ցրուած յայտարարութիւնները կարգաւով, իր խզիւն գէմ չգործելու, ժողովուրդեան յուզումն բորբոքմանը տեղի չտալու և ինքզինքն ամէն պատասխանատուութիւնէ զերծ պահելու համար, կիրակի առաւօտ կանուխ նամակ մը կը զրկէ Աւագբէցին, առջի օրուան

իրեն արուած հրամաններուն պաշտօնական գրութեամբ հաղորդուիլը խնդրելով: Աւագբէցը առանց նամակին պատասխանելու, միայն ժամկոչ եզրօր միջոցաւ լուր կը զրկէ որ այդպիսի անօրինութիւն մը թաղ խորհրդէ պէտք է սպասել, քանի որ անոր ձեռնահասութեան կը պատկանի: Տէր Սարգիս տեսնելով որ Աւագբէցը այսպիսի ծանր պատասխանատուութիւնէ մը խոյս կուտայ և մինչև իսկ նոյն օրը ներկայ չգտնուիր արարողութեան կորոշէ, առանց թաղական խորհրդոյ կողմանէ յիշելու համար նոյն պահուն ստացած երկտող գրութիւնը նկատողութեան առնելու՝ չլիջել Օրմանեանի անունը: Ժողովուրդը որ խուռն բազմութեամբ ներկայ կը գտնուէր, սրտի կատարեալ գոհունակութեամբ մեկնեցաւ, յիշատակութեան մէջէն արտաքսուած տեսնելով իր դաւաճան Պատրիարքին անունը: Կիմանանք թէ յետ աւարտման պատարագի թաղական խորհրդոյ բոլոր անդամները տէր Սարգիս հօր գլուխը հաւաքուելով չլիջելուն համար չափազանց յանդիմանելէն և պախարակելէն վերջ, նոյն իսկ յանդիման եւ խորհրդարանէն դուրս վաճառու. նոյն պահուն վրայ կը հասնի Տիար Ստեփան Մելիքեթեան և տէր հօր վրայ թափուած նախատանաց չկրնալով հանդուրժել յանդուգն կերպով վիճարանութեան կը մտնէ և բողոքող երիտասարդներու կողմանէ կայպանէ իրենց վատ ընթացքը:

Աւերմն, ի՞նչ անուն տալ հարկ

ասոնք աւելորդ է բացատրել թէ ինչ աստիճանի հոգածութեամբ ու սրտահաճութեամբ կը վերաբերին իրենց պաշտօնին: Սակայն մեր նպատակը հոս աղքատախնամի գործունէութիւնը քննադատել չըլլալով անցնինք մեր վերակենարկած զէպրին: Ամիսներ առաջ՝ աղքատ արհեստաւոր մը կը հիւանդանայ. բժիշկը՝ ինչպէս սովորաբար կընեն այդ մարդերը, առանց հիւանդի քսակին խորհուրդ հարցնելու՝ դեղերու կանոնաւոր գործածութիւն ու զօրաւոր սնունդ կը պատուիրէ և քանի որ սնունդը կը բնականաբար կըրտիպուի աղքատախնամի նպատակի դիմել: Սակայն աղքատախնամը, որմէ եթէ ոգեւարի մը համար ջուր ալ խնդրելու ըլլաք՝ իր նիստի օրուան սպասել կը յայտարարէ ձեզ՝ խնդիրը ձգձգելով հանդերձ՝ այնքան չնչին նպատակ մը կը յատկացնէ, որ հիւանդը առանց այդ ճգնաւորական օրապահիկին ալ պէտք սենեանալը կը կարգադրէ իր գործը... մահուայի: Իր տեսակին մէջ այս առաջին զէպը չէր, որ կը պատահէր և նպատակ անբաւականութեան պատճառով քանի քանիներ առատապաճ կամ այսպէս լքուած մեռած էին: Բայց գողթականները, որոնց մեծ մասը հիմա գործ ալ չակած էր՝ ցարդ չէին խորհած ինչնօգնութեան ճիգ մը ընելով՝ ուրիշներու ուսին ա՛լ առաջակալի դարձած բնոր թեթեւցնել

ու քիչ մըն ալ իրենք զիրենք հոգալ: Բարեբաղաբար այս անգամուան արտուր զէպը անհետեւանք չանցնիր. քանի մը ազգեցիկ արհեստաւորներ, որոնք մեռնող հիւանդին խնամքը ստանձնած էին իր վերջին օրերուն՝ աղքատախնամի ընթացքէն զայրացած և միանգամայն այս ախուր մահով կրկին ապացուցուած իրական դասը ըմբռնելով՝ իրեն մը կազմիլ արհեստաւորներուն մէջ: Գողթի փութիկոտութեամբ մը, որ հայուն ետանդի օրերուն յատկանշին է, խօսքէն անմիջապէս գործի կանցնին, խանութէ խանութ կը շրջին, բոլոր արհեստաւորները ժողովի կը հրաւիրուին, կանոնագիր կը շինուի ու 15 օր չանցած կը կազմուի «Արհեստաւորաց աղքատասէր ընկերութիւնը», իրեն նպատակ ունենալով հիւանդ չքաւորներ դարմանել և անգործներուն գործ փնտնել: Ընկերութեան անդամավորձարն է շարաթական մէկ դահ. ողջ, նախաձեռնողներու ետանդուն ջանքերուն շնորհիւ կարճ միջոցի մէջ անդամներու թիւը քանի մը հարիւրի հասաւ և մասնաւոր բժիշկ մը որոշուեցաւ՝ աստիճանային կողմէ յանձնարարուած հիւանդները ձրիաբար դարմանելու, ինչպէս նաեւ զեղարան մը դեղերը հայթայթելու համար: Արարալի էր մեր մինչև հիմա թուլ, ապիկար արհեստաւորներ

րուն մէջ ծնած այս ձեռներկեցութեան ու ինքնօրնութեան ողին, որ պայքային աւելի ընդարձակ գործունէութեան մը սկիզբ կրնայ նկատուիլ: Բայց զժառանգաբար ձեռներկեցութեան և սկիզբի օրերու ետանդին պակասեցաւ բան մը, առանց որու էն մեծ սղեւորութեամբ սխտած գործերն ալ կէս ձամբան կը մնան՝ յարաբեւութիւնը: Հազիւ քանի մը ամիս անցած՝ ընկերութեան անդամներու մէկ մասը սկսաւ վճարումներու նախկին կանոնաւորութեան չեղիլ. ոմանք ալ բողոքովին զողբեցուցին, այնպէս որ հիմա ինչպէս կը լսենք՝ գանձուած սոմսակներու հասոյթը ամսական հազիւ 2—3 ոսկի կը ըլլայ: Սեպտ. 15ին ըստ կանոնագրի՝ ընդհանուր ժողով պիտի գումարուի. չկրնանք թէ այդ ժողովին մէջ միջոցներ պիտի խորհուին այնքան ետանդով սխտած այսպիսի գողթի ձեռնարկ մը քայքայումէ փրկելու: Անոնց, որոնք նախաձեռնարկ ըլլաւու պատիւը ունեցան, բնականաբար ամէնէն աւելի կրնայ իրենց ստեղծած գործը յառաջանելու հոգը: Զի հակառակ ոմանց կարծիքին, որոնք հին աղքատախնամին ջրատիչ հերձուած մը կը համարեն այս ընկերութիւնը, մենք անոր յարատեւութիւնը փափաքողներն ենք, նախ՝ որովհետեւ ու եւ կիրպով չլիջատուի հիւանդ, քանի որ իր անպատկերուն մեծագոյն մասը անոր

բան մը չէր վճարել և երկրորդ որ աս բողոքովին տարբեր հանգամանք մը ունի եւ ամէն բանէ ստաջ պիտի սովորեցնէ իր անդամներուն — որոնք բոլորն ալ պարզ ժողովրդին կը պատկանին — ինքնօգնութիւն և ստանց հարուստներու ոսկիներուն գործելու գաղափարը: Աւելի միտողութիւն մըն ալ, զոր ընկերութեան յառաջիկայ ընդհ. ժողովին լուրջ խորհրդակցութեանը կը յանձնեմ: Ծրագրին խմբագրութիւնը ստանձնող խելամուտ անհատներ, արհեստաւոր դասակարգին մտաւոր զարգացման գործն ալ մտցուցած էին ընկերութեան նպատակին մէջ, որ սակայն սխալ ըմբռնուած դրականութեամբ մը մերժուեցաւ նախորդ ընդ. ժողովի մեծամասնութեան կողմէ: Չքատուր հիւանդնի մը ձրի դարմանելը գողթի բարեգործութիւն մըն է, սակայն շատ աւելի արմատական է հիւանդութիւններու առաջըք առնել: Արդ պէտք է գիտնալ որ ինչպէս բարոյական այնպէս ալ ֆիզիքական հիւանդութիւններու և ախտերու մէկ մեծ մասը աղիտութեանէ առաջ կուգայ: Աւերմն ընկերութիւնը իր նպատակէն չեղած չըլլար. (քանի որ կանոնագրին մէջ որոշուած է ընդ միշտ ամփոփոխ պահել նպատակը) (**) եթէ էսնաֆ դասակարգին մէջ լոյս տարածելու գործն ալ մտցնէ ձրագրին մէջ:

է Ռուսչուքի այս ինքնընտիր թագականութեան հետեւած քաղաքականութեան . . .

Պէտք չէ մտնել շեշտելու որ Ռուսչուքի թէ շինական մեծութեան և թէ խառնութիւններու գլխաւոր պատճառը տեղւոյն Աւագերէցն է եղած միշտ :

ՊԻՐԱԿ

Իսլամիս, 30 Յուլիս

Նայտակ շունիմ քաղաքէս սեւրժումնի զրկուած յուլիս 10 թուակիր թղթակցութիւնը քըննադատել, այլ կուզեմ մի երկու խօսք ընել անոր մէջ գտնուած մի քանի հակասական և երկդիմի կիտերու մասին :

Պ. Վահէ, հոգաբարձութեան և թաղականութեան մասին գրած միջոցին ակնոյնեք կը գործածէ : Հոս չիմ ուզեր երկարօրէն իր գրածներուն հակառակը ապացոյցներով փաստել, այլ միայն պիտի ինքրեմ իրմէ որ ուրիշ թղթակցութիւններ գրած միջոցին քիչ մը անկեղծ ըլլայ և իրականին ճիշդ ու ճիշդ նմանը պատկերացնէ և ոչ թէ փայլուն կիտուածով :

Իրօք հոգաբարձութիւն և թաղական խորհուրդ ձեռք ձեռքի տուած կաշխատէին վարժարանիս և եկեղեցւոյ պայծառութեանը համար . բայց ոչ համեմատելու բառին բուն նշանակութեամբ : Անձնական կրքեր և հաշիւներ շատ ու շատ գերեր խողացած են իրենց գործերուն մէջ և իրենց ունեցան ընթացքն ալ կանոնաւոր ըլլալէ աւելի անկանոնութեան սահմաններուն մօտեցած է :

Երբ Լոյսի խօսքը ըրինք, ասիթը չփայտնենք խօսելու քիչ մըն ալ այն ձեռնարկութիւններու մասին, որոնք եղիպատհանբու լուսաւորութեան գործին ծառայելու նպատակը ունեցած են :

Ընթերցողներէն շատերը թերեւս կը յիշեն թերթերու մէջ կարդացած ըլլալ յայտարարութիւն մը, որ Աղէքսանդրիայի մէջ «Հայկական մատենադարան»ի մը հիմնարկութիւնը կը ծանուցանէր : Մենք ալ լսած էինք թէ քիչ շատ զիրքի տէր անձնուորութիւն մը հոս մատենադարան մը հիմնելու գաղափարը յղացած է եւ քիչ ետքը տեսանք մինչեւ իսկ սպազորուած ծրագիր մըն ալ, որ իր ընդարձակութեամբ կարողացողին ենթադրել կուտար թէ էօմէրի ձեռքով այրուած Աղիքսանդրիայի հին հոշակաւոր մատենադարանն էր որ կը վերակենդանանար : Այնքան ընդարձակ ծրագրի մը լիովին իրագործման գիւրաւ հաւատացողներէն չըլլալով հանդերձ գէթ կը կարծէինք թէ մօտ աստեղն ու եւ չափով մը իրականութիւն դանկտով պիտի կրնայ հանրութեան տմենակենսական մէկ պէտքը գոհացնել : Սակայն այդ օրէն ի վեր տարի մը ու ամիսներ անցան եւ դեռ մատենադարանը իր գոնեքը չբացաւ . չենք գիտեր նոյնիսկ թէ ո՞ր անկիւնը կը փակուին զանազան սեղերէ ձրիաբար ստացուած թերթերն ու

Ազգային ուսուցիչներու մասին շունիմ բան մը ըսելիք . կը հաստատեմ Պ. Վահէի ըսածները և միանգամայն կը յաւելում թէ ամէն գովեստէ վեր է անոնց աշխատութիւնը և անձնուորութիւնը և արժանի քաջակերութեան . բայց քննադատելի է հոգաբարձութեան ընթացքը որ թերացաւ հանդէպ վարժարանի և պաշտօնէից ունեցած պարտականութեանցը մէջ . և շրաւ պէտք եղածը ու կարելին . բան մը զոր եթէ ըրած ըլլար վարժարանու ելի առաջնակարգ վիճակի մէջ պիտի ըլլար, և պիտեճէն պիտի ունենար այս սարեղջանին աւելի գոհացուցիչ վիճակ մը որով կարելի պիտի լինէր առ այս հարկ եղած փոփոխութիւններն և կարգադրութիւններն ընել : Սոյն սուղերը նոր ընտրուելիք հոգաբարձութեան ու շաղրութեանը յանձնելով, կը խնդրեմ իրենցմէ որ նախորդներուն զանցառութիւններն ու հակասութիւնները նկատողութեան առնեն և ըստ այնմ խղճի մտօք կատարեն իրենց յանձնուած պաշտօնը :

Մի երկու խօսք ալ երիտասարդութեան մասին . երիտասարդութիւնը իրեն եղած կրկնակի հրաւերները սիրով կարդացած է և համոզուած է թէ Պլատոնական խօսքերով բան մը չէ կարելի ընել . և խօսքէ աւելի զործել պէտք է, իր անձով իսկ խրախուսել և օրինակ հանդիսանալ :

ՅԻԹՕ

—)(—

զրքերը, որոնք անչուտ կը սպասեն հոն . մինչև որ դեղեցիկ օր մը ըստ յայտարարութեան «Հայ երկասիրութեանց ամբողջ շահմարան մը» ըլլալու չափ ձօնանան :

Մինչդեռ այդ անյայտ մտանադարանին հրաչարածները իրենց «շտեմարանը» լեցնելու վրայ էին . անդին քանի մը երիտասարդներ, որոնք մշտական չփայտնէ մէջ լինելով ժողովուրդին հետ աւելի լաւ կը հասկնային անոր պէտքերն ու պահանջները՝ պարզ դասակարգերուն մէջ հետզհետէ յայտնուող ընթերցանութեան բուն փափաքը տեսնելով . խորհեցան անմիջական ծրագրով մը ըստ կարելոյն գոհացնել զայն : Ասդիկն, անդիկն զրքեր հաւաքեցին, մասնաւոր գիմուէի բրին կաշկասի հայոց հրատարակչական ընկերութեան եւ հայ հեղինակներու, եւ քիչ աստեղն գոյութիւն առաւ կոկիկ մատենադարան մը, Աղէքսանդրիայի ժողովրդական գրադարան-ընթերցարան անուանով, որ հիմա 300 հատոր գիրք ունի . կը ստանայ բաւական թիւով թերթեր ու հանդէսներ : Իր հաստատութեան ի վեր կարճ միջոցի մը մէջ, գրադարանը մեծ զարկ տուաւ արհեստագործ կամ բանուոր դասակարգին պատկանող երիտասարդներու ընթերցասիրութեան . սակայն ցաւալի է որ նիւթական միջոցը կը պակասի զայն աւելի նպատակայարմար վիճակի մը մէջ գնե-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Էնուէբանանս պէլթի» մէջ կը կարդանք .

«Լորտ Նիւթըն որ անցեալներն դէպի Մօնթէնեկրօ ճամբորդութիւն ըրաւ . կը պատմէ հետեւեալ ծիծաղելի պատմութիւնը :

Յուլիանը վերջերս ուզելով իր համակրութեան մէկ ապացոյցը տալ Նիքիթա իշխանին, անոր շքեղ զբօսանաւ մը նուիրեց :

Կայսերական նուէրը երբ հասաւ իր տեղը, իշխանը զբօսանաւով պատյա մը ընելու գնաց . սակայն ապշութեամբ հաստատեց որ ըստ արժէքաւոր իրէզնները որոնք կը գանուէին նախ մէջ, անյայտացած էին :

Այս առեղծուածը դժուար չեղաւ լուծելը : Զբօսանաւը բերող նաւաղները տասն և ութ ամիսներէ ի վեր ամսական առած չըլլալուն համար, զբօսանաւը տուած էր :

— Տրէյֆիւս շատ կը հետաքրքրուի իր տաղանդաւոր փաստաբան Պ. Լապօրիի վիճակով . սրտառու շամակներով տիկին Լապօրիէն տեղեկութիւններ կը հարցնէ վերաւոր ամուսնոյն մասին :

— Տէյլի թէլէկրաֆի թղթակիցը կը հաղորդէ Ս. Բեթերսպուրկէ թէ Չարը և Չարուհին օգոտտուի վերջերս պիտի այցելեն Վիգթորիա թագուհու հետ : Լուրը ստուգութեան պէտք ունի, որովհետեւ դահաժառանգին մահուան պատճառաւ նշանակուած

պալատական սուգը դեռ վերջացած չէ :

— Սպանիական Փօրտ-Բու քաղաքի մէջ, Ֆրանսական սահմանին վրայ, յեղափոխական գոյնով մեթիսիկ մը տեղի ունեցած է :

— Ռուսական Նովոյէ Վրէմիա թերթը կը յայտարարէ . եթէ Սերպիան կուղէ ազատիլ իր ներկայ խախուտ վիճակէն, և թէ Աղէքսանդր թագաւորը կուղէ հաստատ պահել իր զահը, անհրաժեշտ է որ Միւլանը երկրէն հեռանայ :

— Անցեալ օրուան յեղեղը պատճառեցաւ փոսթի խանգարումին . դադրած են երթեւեկութիւնները : Տուներ, խանութներ փաստաւ են, նոյնիսկ կըսուի թէ անձի ալ կորուստներ պատահած են : Մանրամասնութիւնք դեռ յայտնի չեն :

Ա Ջ Դ

Ամբրխանանցի դպրոցը կը բացուի սեպտեմբեր 1ին :

Փափագողներէն կը խնդրուի դիմել Ամբրխանանցի, Պակասօքայ փողոց, թիւ 239 :

Ամէն օր ժամը 10—12 առաւօտ, և 4—6 երեկոյ .

1—4

Ա Ջ Դ

Կրկնագրական կրթութիւնով երիտասարդ մը կը փափաքի Ֆիլիպի վարժարանը դասախօսել Պուլկարէնի, Պատմութեան, աշխարհագրութեան և բնական գիտութեան, դիմել խմբագրութեան :

—)(—

Печатница „Взаимность“ Варна.

թիւնն է լոկ, որ այս հանդէսը հրատարակելու գրգած է երանկի խմբագրի : Ուստի աւելորդ է ըսել թէ մեծ ուրախութեամբ ստացանք անոյնի երկու թիւերը այս նոր թերթին, որ շարաթը երկու անգամ պիտի հրատարակուի . եւ մեր օրուան կենսովը պիտի զբաղի . թէև կանուխ է հիմնուելու երկու թիւերու վրայէն դատաստան ընել, բայց եւ այնպէս մեր ստացած մասնաւոր տեղեկութիւնները խմբագրութիւնը կազմող անհասնելու նկարագրի մասին, կերպաւորեն, որ «Արշալոյս» պիտի ունենայ բարոյացուցիչ թերթէ մը պահանջուած կենսունակութիւնը, խիստ անկողմնակալութիւնն ու մանուսանող անկեղծութիւնը . հետեւաբար եւ պիտի կրնայ գոհացնել եղիպատհան թերթի մը ի վաղուց անսխալ զգացուած պակասը :

Մենք ալ ի սրաւ յանդուրթիւն մաղթելով իրեն կըսպասենք . . .

ԿԱՐԻԾ

Աղէքսանդրիա, 10 Օգոստ.

—)(—